ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանի կողմից անցկացվող խորհրդակցության

18.07.2017թ **ք.Վանաձոր**

Մասնակցում էին՝

Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Օհանյանը, Ն.Ասրյանը, Ա.Դեմիրչյանը, Վ.Դոխոյանը, Ա.Սահակյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, հրավիրված համայնքների ղեկավարներ, պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ

Օրակարգում՝

1. <<Մաքուր Հայաստան>> գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների մասին:
2. Փակված աղբավայրերն ամփոփող կայք-էջի ներկայացում (www.map.transproject.am):
3. <<Հայանտառ>> և <<Հայավտոճան>> ձեռնարկությունների կողմից իրականացվելիք աշխատանքներ:
4. Ոստիկանության և Ճանապարհային ոստիկանության կողմից տարվող աշխատանքներ:
5. Տնտեսվարողների հետ աղբահանության պայմանագրերի կնքման աշխատանքների մասին:
6. Հուլիսի 29-ի համապետական երկրորդ շաբաթօրյակի աշխատանքների կազմակերպման մասին:
7. Այլ հարցեր:

Առաջարկվեց՝

1.Համայնքի ղեկավարներին

ա/ Կնքել պայմանագրեր համայնքի տարածքում գտնվող տնտեսավարող սուբյեկտների հետ՝ աղբահանության վերաբերյալ:

բ/ Օգտվել Փակված աղբավայրերն ամփոփող կայք-էջից և ներկայացնել տեղեկատվություն: (www.map.transproject.am):

գ/ Համագործակցել «Հայանտառ» և «Հայավտոճան» ձեռնարկությունների, ինչպես նաև Ոստիկանության և Ճանապարհային ոստիկանության հետ, վերահսկել տարածքներում աղբահանության խնդիրների լուծումը:

2.Ոստիկանության և Ճանապարհային ոստիկանության ծառայություններին՝

Առաջարկել միջոցներ ձեռնարկել ապօրինի աղբ թափողներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

3.Համայնքի ղեկավարներին և կազմակերպությունների ներկայացուցիչներին

Անհրաժեշտ աշխատանքներ տանել ս/թ հուլիսի 29-ի համապետական երկրորդ շաբաթօրյակի աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

ՀՀ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Հ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Արծ.Ռ.Աղաբեկյան
Հեռ. 0322 /2-31-99/